


գործութիւնը յայտնող Արձանադրութիւնը անվթար պահելով հանդերձ, իր անունը փոխած ու եղած է «Պէգնեան», վասն զի Յարութիւն Ամիրայ Պէգնեան, որ Տիւրքիանի շնորհիւ յառաջադիմած էր, վերաշինած էր զայն ի յիշատակ իւր մեծանուն բարերարին ինչպէս մանրամասն կերպով ատոր պատմութիւնը հրատարակեց Մելքոն Ասատուր¹⁹⁸ :

Բարեկեցիկ գիւղ մը եղած է Գարթալ եւ անդուրն Հայերը մեծ մասամբ զբաղած են այգեգործութեամբ եւ գինեգործութեամբ, ինչպէս ըսի վերեւ : Ասոնք ունեցած են՝ ըստ ականգութեան, ընդարձակ այգիներ, որոնք կը տարածուին եղեր երբեմն, Գարթալէն մինչև իր ետեւը մէկ ժամ եւ ակելի հեռաւորութեամբ գտնուած Եաֆանք անուն ծովագիտակ բլուրը, բաց այժմ այդ այգիներուն հետքը անգամ չի կայ, խոտան ու անմշակ դաշտեր են, եւ արդէն Գարթալցի Հայերն ալ չա՛տ նուազած են եւ աղքատացած՝ շնորհիւ 1915—1916ի տեղահանութիւններուն :

Գարթալի մէջ ծնած է 1822ին, նշանաւոր Սրբուհի մայրապետ Գալֆայեանը, որ իր անուանակիր Որբուհիանոցը հաստատած է 1866ին Ստաղիւզ, եւ կը հանգչի այդ շէնքին մատուռին ձախ կողմը (տե՛ս Հատոր Բ., էջ 443—445) :

Գարթալ գիւղով կը վերջանայ ահա «Ստամպոլոյ Պատմութեան» է. գլուխին Ծանօթագրութիւններս :

(Շարունակելի) ԴԿՏ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ



ԳՐԻՐԹ ԵՐԷՑ ՍԵԼԵՉՈՐԵՑԻ ՏՈՂԱՆՈՅ

Դաւիթ Սալաճորեցի Ժէ. դարու Հայ շնորհալի տաղասացներէն է : Անիկա Հայաստանի ծաղիկներու երգիչն է :

1. Կեանքը : Իւր Ծագական գովասանքի մէջ կը գրէ Դաւիթ¹.

Երկիրս Արգրում կ'ասեն,
Սալաճոր գիւղս իմ օթեւան :

Ծնած է ուրեմն Կարնոյ շրջակայքի Սալաճոր գիւղին մէջ, ուսկից ատեալ կ'անուանէ ինք գինքը Սալաճորեցի :

¹⁹⁸ Տե՛ս Ժամանակ թերթ Կ. Պոլսոյ, 1934 Յունիս :
¹ Բանասէր, 1901, էջ 97 :

Սալաճոր կ'իյնայ Նորչնի արեւմտակողմը. «սոյն գիւղ ասէն լինել ի նախնունն բաղձամարդ, գործէ վկայեն գերբուկը աւերակաց», կը գրէ Յովհաննէս Վաղարշակեացի² : Իր օրով կային այս գիւղը 8 հայ եւ 30 տաճիկ տուն. Իսկ 1883ին, ըստ Միրախորեանի³, 8 հայ եւ 28 տաճիկ տուն :

Ժամանակը, երբ ծաղկած է Դաւիթ, Հ. Ղ. Ալիշան, կը համարի «հաւանորէն Ժէ. դար»⁴. Իսկ Նորայր Բիւզանդացի⁵ կը գրէ, «Թուի թէ ապրած է յժէ. կամ յԺԸ. դարու» :

Դաւիթի ծնողաց անունները ծանօթ չեն մեզի : Կ'երեւայ թէ մանուկ հասակին կ'ըսնացուց զանոնք. անիկա իր տաղերու մէջ կը ներկայանայ «որբիկ» : Իր խնամակարները կը յանձնեն զինքը անդուրն քահանայի խնամքին, որպէս զի ծանօթանայ գրադիտութեան եւ պատրաստուի քահանայութեան : Իր «Հայր արարիչ» տաղին վերջը կը գրէ Դաւիթ.

Սալաճորի որբիկ Դաւիթ...
դու կարգացող քահանայու :

Իսկ «Քեզ համարով օր էր տըված» տաղին մէջ կը կարդանք.

Ես Դաւիթն եմ իրիցացու
ըստեղծող Տէր, զիս կարգացու :

Դարձեալ «Պարծանք դասուց» տաղին մէջ խօսքը Աստուածածնի ուղղելով կը գրէ.

Որբիկ Դաւիթ Սալաճորցի,
տըւիր ուրար, գիրս կարգցի :

Ստանալով ուրար նա եղած էր սարկաւազ. այսպէս Ծագական գովասանքի մէջ (տող 127) կը գրէ.

Ծօ՛, Սալաճորցի սարկաւազ,
դաստան արիւր ծաղիկներուն :

Թէ հասա՞ւ երիցութեան, չունինք իր երգերու մէջ որ եւ է ակնարկութիւն : Բայց գիտենք որ անիկա ամուսնացած էր եւ ունէր զստրիկ մը, որ տարածամ մահուամբ վախճանած է, թողլով իւր հայրը սուգի մէջ : Կ'երեւայ թէ կ'ինն ալ վախճանած էր վաղամեռիկ : Իր կսկիծը զստեր մահուան պատ-

² Ճանապարհ., 17 :
³ Նկարագրական ուղեւորութիւն ի հայրենակ գաւառս Արեւիկեան Տաճկաստանի : Մասն Գ. Կ. Պոլիս 1885, էջ 169 :
⁴ Յուշիկը հայրենեաց, Բ., 126 :
⁵ Բանասէր, 1901, էջ 87 :

ճառաւ արտայայտած է Դաւիթ «Փառք քեզ թագաւոր փառաց» տաղին մէջ, որ նուիրուած է դստեր յիշատակին. կը գրէ.

Ես խիստ բարձրամիտ էի,
նա ումեկ գըրի Նոանայն.
Այնոր բարկացաւ Տէր ինձ
ու ձեռացս առաւ իմ տղան.
Ա՛յ իմ Նոանայ գստրիկ
Նոանայ սուրաթիւ անըման.
Աւախ քո կանանչ արեւդ,
որ մըտաւ ի հօղն ի զնտան...
Քեզ անձարն ձար անի,
մէկ ու ձար դուստր իմ Նոանայ,
Դու զիս բընաւերք արիւր,
զինչ պայղուչքն աւերքըն կենան : ...

Կ'երեւայ թէ Դաւիթ իւր ամուսնոյն եւ զստեր մահէն ետքը վարդապետ եղած է : «Փառք քեզ թագաւոր փառաց» տաղին խորագրին մէջ կ'ըսուի. «Տաղս այս... Դաւիթ վարդապետի է, գեղջիւ Սալաճորեցի» :

Անշուշտ միշտ Սալաճոր գիւղին մէջ չ'ենաց Դաւիթ : Թերեւս ինքն է այն Դաւիթ երէցն, որ Կարնոյ մէջ կատարած է օրինակութիւններ 1681 թուին : Իրմէ ծանօթ են ինձ հետեւեալ յիշատակարանները.

Երեւանի Պետ. Թանգարանի Յայտնաւորքը (Թ. 29 Բ) կ'ըսուի թէ «գրեցաւ... յաստուածապահ եւ ի գեղեցկաչէն մայրաքաղաքս Արգրում, ի դուռն Միւրան սուրբ Աստուածածնի, ի թուին ՌձԼ. եւ ի յամսեանն յունիսի Ժ. ի խնդրոյ... Շինոցի Ալեքսանդր սին... յիշեալիք... նաեւ զանարժան Դաւիթ զրիչս եւ զճողան իմ՝ զհայրն իմ զԵրբիկանուն եւ զմայրն իմ զԱննայն» :

Դարձեալ վիեննայի Միլիթարեան Մատենագարանի Թ. 587 Պատարագամտոյցն տենադարանի թ. 587 Պատարագամտոյցն «գրեցաւ... ձեռամբ Դաւիթ իրիցի ի մայրաքաղաքս Արգրում ի թուին ՌձԼ, յունիսի Ժ» :

Եթէ հաստատուի Դաւիթ երէցիս նոյնութիւնը Դաւիթ Սալաճորեցու հետ, ոչ միայն կուտան մը կ'ունենանք ժամանակի մասին, այլ եւ ծանօթացած կ'ըլլան Դաւիթի ծնողաց անունները :

Դաւիթ Սալաճորեցի երգած է տաղեր : Անոնց մեծագոյն մասը ստեղծագործութիւնն է իր պատնեկութեան տարիներու, երբ տակաւին գալիր կամ սարկաւազ էր : Ունինք Սալաճորեցու քնարէն հետեւեալ տաղերը.

1. Անխորագիր. տող մը հայերէն եւ տող մը տաճկերէն.

Հայր արարիչ, Տէր կենդանի.
Հարտէ մէմուռ սին վարդարա...
Վերջ՝ Սալաճորցի որբիկ Դաւիթ
յուզի դարայ սէն կուտահար,
Դու կարգացող քահանայու,
տայիմ չաղը, դանի սաթար... :

Չեռագիր՝ վիեննա, Միլիթ. Մատեն., Թ. 369, թղ. 1ա—7ա :

2. Երգ Աստուածածնայ :
Պարծանք դասուցըն վերնական
Կոյս Մարիամ Աստուածածին.
Դու յԱննայէ ընծայեցար,
արժանացար Հոգոյն շնորհաց... :

Վերջ՝ Որբիկ Դաւիթ Սալաճորցի,
տըւիր ուրար՝ գիրս կարգացի,
Փոքր ի շատէ գեղգ գովեցի,
Կոյս Մարիամ Աստուածածին... :

Չեռագիր՝ վիեննա, Միլիթ. Մատեն., Թ. 369, թղ. 9ա—11բ :

3. Տաղս այս համեղագոյն է ի երերունն Դաւիթ վարդապետի է, գեղջիւ Սալաճորցի (ի մահն դստեր իւրոյ) :

Փառք քեզ թագաւոր փառաց,
քեզ փառք տան աշխարհս ամենայն.
Վերջ՝ Սալաճորցի որբիկ Դաւիթ
փառք չասի ես օր մի մեղաց...
Ես եմ մեղաւոր անղարձ,
մէկ ու ձար դուստր իմ սիրական :

Չեռագիր՝ վիեննա, Միլիթ. Մատեն., Թ. 156, թղ. 54բ—56բ : Պարիս, Ազգային Մատ., Թ. 290, թղ. 202բ—203բ (անանուն) :

4. Անխորագիր (տող ի վերայ մահուան) :
Քեզի համրով օր էր տըված,
Կարմիր ու սեւ գիր էր գըրած.
Աշխարհս քեզի մուլք չէր տըւած,
Փուճ աստնվորիս ինչ կու դատիս... :

Վերջ՝ Ես Դաւիթն եմ իրիցացու,
ըստեղծող Տէր, զիս կարգացու... :
Չեռագիր՝ վիեննա, Միլիթ. Մատեն., Թ. 369, թղ. 22ա—23բ :

5. Գովասանք ծաղկանց :
Օրհնեալ ես դու, Հայր երկնաւոր,
անքնեկի աստուածութիւն.
Կամիմ գովել սակաւ մի բան,
միտքըս արկար, իսկըս է ի քուն... :

Վերջ՝ Սեւ Դաւիթն եմ, շատ դատեցայ,
 դըրուին առնում ծաղկըներուն.
 Սակաւ ծաղկուներն ես եմ գովել,
 բազում մընայ վարդաններուն.
 Երկիրըս Արզըրում կ'ասեն,
 Սալաձոր դեղս իմ օթեւան...:

Չեռագիր՝ Վենետիկ, Մխիթ. Մատեն.⁶:
 Ասկէ օրինակութիւն մը առ Նորայր Բիւզան-
 դացոյ:

Հրատարակուած՝ 1. Մեղու Հայաստանի,
 1858, էջ 21—23: — 2. Սրբանձտեանց՝
 Արեւելեան Մամուլ, 1884, էջ 137—139,
 177—179⁷: — 3. Սրբանձտեանց՝ Համով
 հոտով, էջ 278—285⁷: — 4. Կոստանեանց՝
 Նոր Ժողովածու, Բ., էջ 66—75: — 5. Նո-
 րայր Բիւզանդացի, Բանասէր, 1901, էջ 87—
 129 (էջ 89—97 բնագիր, էջ 97—129 մեկ-
 նութիւն ծաղկիներու անուններու):

ԴԱԽԻԹ ՍԱԼԱԶՈՐԵՅԻՈՅ ՈՂԲ Ի ՄԱՀՆ ԴՍՏԵՐ
 ԻՒՐՈՅ

Տաղս այս համեղագոյն է ի յերերումն
 Դաւիթ վարդապետի է, գեղջիւ Սալաձորցի:

Փառք քեզ թաղաւոր փառաց,
 քեզ փառք տան յաշխարհս ամենայն.
 Ես եմ մեղաւոր անդարձ,
 փառք չասի ես օր մ'ի մեղաց:

5 Ես խիստ չար հպարտ էի,
 որ չափ չըկար իմ հպարտութեանս,
 Ոչ հացըմ աղքատի տփի,
 ոչ զնացի ի Ժամատեղի:
 Ես խիստ բարձրամիտ էի,
 նայ ումեկ դըրի Նոանայն,
 Այնոր բարկացաւ Տէր ինձ,
 ու ձեռացս առաւ իմ տըղան:

Գոչեմ հառաչեմ լալով,
 պաղատիմ փառք քեզ տիրական.

15 Սիրով քաղցրացիր նորա,
 մի ձրգեր զիս ոտից կոխան:

Ա՛յ իմ Նոանայ դատրիկ,
 Նոանայ սուրաթդ աննման.

20 Աւա՛ղ քո կանանչ արեւդ,
 որ մըտաւ ի հողն ի գընտան:

ԽՈՐԱԳԻՐ՝ Համեղագոյն է ի երերումն:

6 ո չափ չըբար: — 7 անբար: — 8 Ժամայ
 տեղի: — 15 նորայ: — 16 մի մի ձրգեր: 19 աւախ քոյ:

⁶ Կը սկսի 17րորդ տողէն՝ «Անբախտի սիրելիք
 են...»:

⁷ Կը սկսի 18րորդ տողէն՝ «Հուր որոտաց, քո-
 մին հնչեաց...»:

Վախեմ, իմ մեղաց մեռար, Նոանայ,
 կամ սըրբունաքն ինձ բարկացան:
 Ուր էր, Աստուծով լինէր,
 քեզ դասէր ի յաջակողման:
 Բեզ անձառն ճար արի 25
 մէկ ու ճար դուստր իմ Նոանայ.

Դու զիս բընաւերք արիւր,
 զինչ պայգուչքն աւերքըն կենան:
 Թէ ի տանէն դուրս յէլնեմ, Նոանայ,
 դուսըն լոյս, աչերս է մըթան. 30

Սեւ լաթ դօլլանտով սըրբեմ,
 արաստունքս առեր, լոյս չըկայ:
 Դառնամ դուռն ի ներս մտնում, Նոանայ,
 տունըն սուգ առեր կու տըբայ. 35

Մարդըկին չիվան առեր,
 դերընին ամէն փոշիման:
 Գնացեր տանըս շնորհքն, Նոանայ,
 թունա առեր, տունն է աւեր խան. 40

Աւելը ալ աւաղ կ'ասէ,
 թէ բերէք իմ նոր բուրաստան:
 Թէ յէլնեմ ի քունձդ էրգամ, Նոանայ,
 քունձդ խոր դերդ մութն ու գընտան. 45

Դառնամ եւ սընտուկդ հայիմ,
 դուռն փակ կողպանքն ի վրայ:
 Թէ յէլնեմ թախադ գնամ, Նոանայ,
 փոշոտել սարքն վար կու դայ. 50

Դառնամ ի ծալքն հայիմ,
 ծալքն ծալ, դալազն ի վրան:
 Թէ յէլնեմ մառանդ գնամ, Նոանայ,
 կարանիդ ամէն ի շուրջ կան, 55

Աւաղ եւ բորբոք կ'ասեն,
 քունձ պուճախն ինձի կու տան:
 Թէ յէլնեմ ի գոմն գընամ, Նոանայ,
 անասունքն ամէն ի սուգ կան. 60

Կովերն ալ կըթող կուզեն,
 թէ բերէք մեր նոր թուրվանդան:
 Թէ յէլնեմ ի դուրս էրգամ, Նոանայ,
 նայ քարերն ինձի վայ կու տան. 65

Կ'ասեն. Ծօ անդութ ծընող,
 դու կարօտ թողիւր քո տըղան:
 Թէ յէլնեմ յաղբիւրն գնամ, Նոանայ,
 ջուրն գնացքն առնէ մանկման. 70

Կանգնի ու վըտակ դընէ,
 թէ ե՞րբ դայ իմ խասխորան:
 Թէ յէլնեմ հանդաստան գնամ, Նոանայ,
 բոյս առեր գեանէն վեր կու գան. 75

25 անձարն: — 32 չըբայ: — 37 շնորքն: —
 38 տունէ: — 39 աւախ: — 40 բէրէք: — 41 էրգամ: —
 44 կողպանքն: — 46 դու դայ: — 51 աւախ: — 54 ի
 սուգ: — 55 կովերն ալ կըթող դուզեն: — 56 բէրէք:
 — 57 էրգամ: — 59 անդութ ծնող: — 60 քոյ: —
 61 յաղբիւրն: — 63 կանքն: — 66 բուս... դու գան:

Բոյսեր սեւ հողին միջին,
 գոյնըդոյն ծաղկունքն կու ցընձան:
 Արտասունքս ծով էր, Նոանայ,
 տատանիմ զինչ նաւն ի ծովայն. 70
 Ես եմ զարդ էղեր ի մէջ,
 որպէս նաւ յարեաց երերման:
 Քակիկի ճրովընոյս ոլորն, Նոանայ,
 շարժ ընկել զօղվածս թնդընդման. 75

Հառաչանք ի սըրտիս միջին,
 զինչ ծովու ալիք կու հեծան:
 Բաղկունքս անդօր դարձեր, Նոանայ,
 եւ մատունքս ամէն կու դողան:
 Քաղուել է գոյն երեսիս,
 սիրտս ճրմըլալ, աչերքս կու լան: 80

Թէ յէլնեմ ձորերն էրգամ, Նոանայ,
 յորդահոս ջըրեր կու բըխան,
 Վայրիքնին երամ կապեր,
 արեքնուն տակն կու կենան: 85

Ամէն կենդանիքս որ կան,
 տեսանեմ ձագով շուրջ կու գան,
 իմ ձագն արծրվին տըլի,
 ես աւեր բունըն կու կենամ: 90

Ես եմ քո տեսուտ կարօտ,
 մէկ ու ճար դուստր իմ սիրական:
 Վիւննա, Մխիթ. Մատ., Թ. 156, թղ.
 54բ—56բ: 2. Ն. ԱԿԻՆԵԱՆ



ՅՈՒՅԵԿ ՀԱՅԵՐԷՆ ՉԵՌԵԳՐԵՅ
ՀԱՄԱԼՍԵՐԵՆԻ ՄԱՏԵՆԱԳՐԵՆԻՆ Ի ԼՂՈՂ
 (Uniwersytet Jana Kazimiesza)
 ԿԱԶՄԵՅ Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Լվովի Հայոց Արքեպիսկոպոսարանը 1932,
 յունիսին, կազմակերպած էր իւր սրահնե-
 րուն մէջ հայկական Յուցահանդէս մը, ուր
 ի տես դրուած էին բազմազան առարկաներ,
 որոնք կը հայէին Լեհահայոց գաղթականու-
 թեան պատմութեան:

Այս առթիւ այցելած էի Լվով: Գլխաւոր
 նպատակս էր ուսումնասիրել քաղաքիս մէջ
 պահուած հայերէն ձեռագիրները: Աշխա-

67 բուսեր: — 68 դու նըրպուն: — 71 ի մէջը:
 75 հառաչան: — 76 յալիք: — 80 ճմեալ... դու լան:
 — 81 էրգամ:

տութիւնս դիւրացաւ այնու, որ Յուցահան-
 դիսի սրահներու մէջ մեծ խնամքով հաւա-
 քուած եւ ի տես դրուած գտայ բազմաթիւ
 ձեռագիրներ, հանուած մասամբ Արքեպիսկո-
 պոսարանի եւ մասամբ քաղաքի Հին Համալ-
 սարանի Մատենադարաններէն եւ այլ Թան-
 դարաններէ: Կային հոն նաեւ ձեռագիրներ,
 որոնք բերուած էին Ստանիսլաւովի Հայոց
 Առաջնորդարանէն:

Աւարտելով այս ցուցադրուած ձեռագիր-
 ներու ցուցակագրութիւնը, անցայ Համալ-
 սարանի Մատենադարանը, ուր գտայ նոր
 թիւ մ'ալ ձեռագիրներու: Ժամանակս չներեց
 խուզարկութիւններ կատարել Քաղաքին այլ
 Հիմնարկութիւններու մէջ: Նոյնպէս չյաջո-
 ղեցաւ ինձ այցելել Ստանիսլաւով, Հոռոզնե-
 կա, Քութի, Սնեաթին եւ այլ քաղաքներ,
 ուր ապրած են եւ կ'ապրին հայ գաղթակա-
 նական զանգուածներ: Յուսարեւր երեւան
 բերել այս Հիմնարկութիւններու եւ քաղաք-
 ներու մէջ ալ դրուոր մնացորդներ Լեհա-
 հայոց անցեալէն:

Հին է Լեհահայոց գաղթականութիւնը:
 Սկսեալ ժ. Գ. դարէն հասան Լեհաստան, այլ
 եւ այլ խումբերով, գաղթականներ, մասամբ
 Ղրիմի վրայէն եւ մասամբ Արեւելքէն, որոնք
 զետեղուեցան զանազան քաղաքներ. եւ ըստ
 բերման պարագայից տեղափոխեցին իրենց
 կայանը քաղաքէ քաղաք, նաեւ երկրէ երկիր:
 Հո՞ թուով գաղթականներ հաստատուեցան
 Կամենից եւ Լվով: Վերջին քաղաքս, սկսեալ
 ժ. Գ. դարէն եղաւ արքեպիսկոպոսանիստ. եւ
 ասկէ կը կառավարուէին Լեհաստան եւ Ռու-
 մանիա գանուող գաղթականութիւնները:

Լեհահայ գաղթականութեան ամէնէն
 պայծառ շրջանը կը ներկայանայ ժ. Գ. դարու
 առաջին քառորդին ի Լվով: Ունէր քաղաքս
 իւր Արքեպիսկոպոսարանը, Դատարանն եւ
 Դպրոցը: Արեւելքէն հոն հասնող նոր գաղ-
 թականներ ծաղկեցուցին գըշութեան արու-
 ետը եւ կատարեցին մեծ թուով օրինակու-
 թիւներ, թէ իրենց պիտոյքին եւ թէ ար-
 տածութեան համար: Բացուեցաւ ի Լվով
 նաեւ Տպարան (1617): Ունէր Առաջնորդա-
 րանը իւր ճոխ Գրադարանը:

Չանքերը կրնային լաւ արդիւնք տալ
 Գաղթականութեան համար, եթէ ժ. Գ. դարու
 երկրորդ քառորդին չյուզուէր Լեհահայ Գաղ-
 թականութիւնը յանկարծայարոյց փոթորիկէ
 մը, Նիկողայոս Թորոսովիչ արքեպիսկոպոսի
 օրով: